ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Գրիգորի Վարդանյանի «Աշխատուժի միգրացիայի կարգավորման հիմնախնդիրները Եվրասիական տնտեսական միությունում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսության, ներկայացված Ը.00.06-«Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Համաշխարհային տնտեսական կապերի ընդլայնման պայմաններում բնակչության գլոբալ միգրացիան հասարակական կյանքի զարգացման մեջ զբաղեցնում է կարևորագույն տեղ: Միգրացիոն գործընթացներում ներգրավվում են ավելի ու ավելի շատ պետություններ, գրեթե չկան երկրներ, որոնց միգրացիոն խնդիրներն ու դրանց հետևանքները չեն առնչվում: Նշված խնդրի նկատմամբ հետաքրքրությունն ուժեղացավ է այն իրողությունից հետո, երբ միգրացիայի բացասական հետևանքները սկսեցին զգացվել միջազգային մակարդակով, իսկ մարդկությունը բախվեց դրան հաջորդող սուր և խնդրահարույց իրավիճակների լուծման գործում երկրների ջանքերը համակարգելու անհրաժեշտության հետ:

Աշխատուժի միգրացիան լայնամասշտաբ, գլոբալ և ավելի ու ավելի մեծ ծավալներ ընդգրկող հասարակական գործընթաց է: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող կառուցվածքային և ինստիտուցիոնալ անհամամասնությունների պայմաններում սոցիալ-տնտեսական շարժառիթներով տեղի ունեցող աշխատանքային միգրացիան օբյեկտիվ երևույթ է և այն կարելի է դիտարկել որպես դոնոր և ռեցիպիենտ երկրների տնտեսությունների զարգացման կարևորագույն գործոն, հատկապես բարձր որակավորում ունեցող աշխատուժի միգրացիայի առումով:

Բնակչության, մասնավորապես աշխատուժի տեղաշարժի կարգավորման հիմնախնդիրները արդիական են ոչ միայն ամբողջությամբ համաշխարհային տնտեսությունում, այլև կարևոր ազդեցություն ունեն տարածաշրջանային տնտեսական համագործակցության հետագա խորացման, համագործակցող երկրների արտաքին քաղաքական առաջնահերթությունների սահմանման գործում:

Աշխատանքային միգրացիան տարածաշրջանային ինտեգրման կարևորագույն ռեսուրսներից մեկն է, որի միգրացիայի կարգավորումն իրականացվում է ընդհանուր տարածաշրջանային մակարդակով: Միայն խոշոր ինտեգրացիոն միությունները՝

օգտագործելով շուկաների, ռեսուրսային բազայի և աշխատուժի միավորման առավելությունները՝ կարող են դիմակայել գլոբալացվող աշխարհի աճող մրցակցությանը:

Նախկին խորհրդային միության երկրների, հատկապես Ռուսաստանի Դաշնության հետ ՀՀ տնտեսական համագործակցությունը, բնակչության տեղաշարժի գործընթացները բավականաչափ ակտիվ են եղել, սակայն 2015 թ. Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցությունից հետո ձևավորել է համագործակցության ինստիտուցիոնալացման անհրաժեշտություն: Աշխատուժի միգրացիայի կարգավորման մեխանիզմների հստակեցումը, ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականության առանձնահատկությունների բացահայտումը, անդամ երկրներում աշխատող միգրանտների իրավական պաշտպանվածության ուսումնասիրությունը խիստ արդիական է, որով էլ պայմանավորված է գրախոսվող աշխատանքի հրատապությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը ԵԱՏՄ-ում և, հատկապես, Հայաստանում, աշխատուժի միգրացիայի կարգավորմանն առնչվող խնդիրների սահմանումն ու լուծման հնարավոր արդյունավետ ուղիների բացահայտումն է: Նշված նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել մասնագիտական գրականությունում առկա՝ աշխատուժի միգրացիայի տեսամեթոդական հիմքերը և տալ դրանց արդիականության գնահատականները,
- ✓ վերլուծելով միջազգային կազմակերպությունների վիճակագրական տեղեկատվական տվյալները՝ գնահատել աշխատուժի միջազգային միգրացիայի մասշտաբները, միտումները, դրսևորման առանձնահատկություններն ու ընդգրկման շրջանակներն ամբողջ աշխարհում,
- ✓ հիմք ընդունելով աշխատուժի միջազգային միգրացիայի սոցիալ-տնտեսական բնույթը՝ հետազոտել դրա ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա,
- ✓ հետազատել աշխատուժի միգրացիայի միջազգային, տարածաշրջանային և պետական կարգավորման ինստիտուցիոնալ հիմքերը՝ ուսումնասիրելով միջազգային փորձը և Հայաստանում դրա տեղայնացման հնարավորությունները,
- ✓ վերլուծել ԵԱՏՄ երկրներում միգրացիոն գործընթացները՝ գնահատելով դրանց ազդեցությունն անդամ երկրների ժողովրդագրական իրավիճակի վրա,
- ✓ հենվելով առկա հետազոտությունների վրա՝ վեր հանել Հայաստանից դեպի ԵԱՏՄ մյուս երկրներ միգրացիան պայմանավորող հիմնական գործոնները,

- ✓ գնահատել ԵԱՏՄ երկրների տնտեսությունների մրցունակության վրա աշխատուժի միգրացիայի ազդեցությունը՝ հաշվի առնելով անդամ երկրների հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները,
- ✓ հաշվի առնելով ԵԱՏՄ անդամակցության արդյունքում ի հայտ եկած փոփոխությունները՝ գնահատել հայաստանյան միգրացիոն քաղաքականության հիմնախնդիրները և ներկայացնել լուծման հեռանկարները,
- ✓ բացահայտել Հայաստանի միգրացիոն քաղաքականության բարելավման ուղիները, ինչպես նաև կանխատեսել եվրասիական ինտեգրման քաղաքականության զարգացման հեռանկարները:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության օբյեկտը Հայաստանի միգրացիոն հոսքերն են, իսկ հետազոտության առարկան՝ աշխատուժի միգրացիայի կարգավորման մեխանիզմները ԵԱՏՄ-ում:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության իրականացման մեթոդաբանական հիմքը առաջնային և երկրորդային տեղեկատվության հավաքագրման գործիքակազմի կիրառումն է: Առաջնային տեղեկատվության հավաքարման համար իրականացվել են դաշտային հետազոտություններ: Երկրորդային տեղեկատվության հավաքագրման համար հիմք են ծառայել հայրենական և արտասահմանյան տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, դասական և ժամանակակից տնտեսագիտության տեսական հիմնադրույթները, աշխատուժի միգրացիայի ոլորտը կարգավորող միջազգային կոնվենցիաները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ԵԱՏՄ անդամ երկրների պետական կառավարման մարմինների որոշումները, հաշվետվություններն ու ռազմավարական ծրագրերը, վիճակագրական մարմինների տեղեկատվությունը և այլն:

Միգրացիոն գործընթացների ուսումնասիրության համար օգտագործվել են հիմնականում քանակական և որակական հետազոտական մեթոդներ: Օգտագործվել են նաև վիճակագրական, մաթեմատիկական (գրաֆիկական), համեմատական և կառուցվածքային վերլուծության մեթոդները: Վիճակագրական տվյալների հետազոտության և վերլուծության նպատակով օգտագործվել են SPSS17.0 և Eviews 10 SV ծրագրային փաթեթները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, այն

շարադրված է 172 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածների):

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը և հրատապությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթ պարունակող դրույթները, մատնանշվել է դրանց գործնական նշանակությունը, արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Առաջին՝ **«Աշխատուժի միջազգային միգրացիան՝ որպես համաշխարհային տնտեսության զարգացման գործոն»** գլխում ներկայացվել են աշխատուժի միջազգային միգրացիայի տեսամեթոդաբանական հիմքերը և տնտեսագիտական բովանդակությունը, աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, ինչպես նաև ուսումնասիրվել են աշխատուժի միգրացիային կարգավորման տարբեր՝ միջազգային, տարածաշրջանային և պետական կարգավորման հիմնական գծերը:

Երկրորդ՝ **«ՀՀ միգրացիոն քաղաքականությունը ԵԱՏՄ անդամակցության համատեքստում»** գլխում վերլուծվել են աշխատուժի միգրացիոն գործընթացները ԵԱՏՄ երկրներում, որտեղ կարևորվել է Հայաստանի միգրացիոն իրավիճակի համապարփակ վերլուծությունը և դեպի ԵԱՏՄ երկրներ միգրացիան պայմանավորող հիմնական գործոնների ու խնդիրների ուսումնասիրությունը, անդրադարձ է կատարվել ԵԱՏՄ-ում միգրացիոն հոսքերի կարգավորման ինստիտուցիոնալ հիմքերին, համագործակցող երկրների տնտեսությունների համեմատական վերլուծությանը:

Ատենախոսության երրորդ՝ **«ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականության բարելավման հիմքերը և ՀՀ միգրացիոն քաղաքականության հեռանկարները»** գլխում՝ դիտարկվել են ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականության բարեփոխումների հիմնուղիները, իրականացվել է ՀՀ միգրացիոն հիմնախնդիրների գործոնային հետազոտություն, ներկայացվել են ՀՀ միգրացիոն քաղաքականության բարելավման մոտեցումները: Ատենախոսությունում կատարված վերլուծություններն ամփոփվել են ուշագրավ **եզրակացություններով և առաջարկություններով:**

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվել է տեսագործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներում, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն հետևյալները են՝

- բացահայտվել են համաշխարհային տնտեսական աճի, միջազգային դրամական փոխանցումների, զարգացման նպատակով ստացված դրամական օգնությունների

միջև փոխկապվածությունները, տնտեսաչափական մոդելների հիման վրա գնահատվել են դրամական փոխանցումների և կրթական մակարդակի, ինչպես նաև ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքի, դրամական փոխանցումների և զբաղվածության մակարդակի միջև կոռելյացիոն կապերը,

- Հայաստանի բոլոր մարզերի տնային տնտեսությունների շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա բացահայտվել են երկրից դեպի ԵԱՏՄ երկրներ միգրացիոն հոսքերի ընդլայնման միտումների հիմնական դրդապատճառները և խնդիրները, տրվել են դրանց քանակական գնահատականները,
- գնահատվել է ԵԱՏՄ երկրների տնտեսությունների վրա աշխատուժի միգրացիայի ազդեցության շրջանակը՝ բացահայտելով միգրացիայի համատեքստում տնտեսական գործընթացների և ցուցանիշների (տնտեսական աճ, ֆիզիկական անձանց դրամական փոխանցումներ, գործազրկության և աղքատության մակարդակներ, նվազագույն ու միջին ամսական անվանական աշխատավարձեր) միջև առկա փոխառնչությունները,
- մշակվել են ԵԱՏՄ շրջանակներում միգրացիոն հոսքերի կարգավորման ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ վեր հանելով ոլորտի կարգավորումը խոչընդոտող հիմնական խնդիրներն ու առաջադրելով ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականության բարեփոխման հիմնուղիներն ու դրանց ազդեցության հնարավոր սցենարները,
- բացահայտվել և հիմնավորվել են միգրացիոն քաղաքականության մշակման և կիրառման թիրախային մոտեցումները՝ Հայաստանում միգրացիոն քաղաքականության գործընթացների կատարելագործման ներգաղթի խթանման և ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակով:

Ատենախոսությունում ստացված՝ ՀՀ տնտեսության վրա աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցության գնահատման քանակական և որակական վերլուծությունների արդյունքները, միգրացիոն քաղաքականության ուղղությամբ առաջարկվող լուծումները կարող են ունենալ **տեսագործնական նշանակություն,** իսկ աշխատուժի միգրացիայի կարգավորման արտասահմանյան փորձի՝ ՀՀ-ում և ԵԱՏՄ-ում տեղայնացման հնարավորությունների հիմնավորումը կարող է հիմք հանդիսանալ առավել մանրազնին տեսագործնական վերլուծության համար: Ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են կիրառական նշանակություն ունենալ նաև հիմնախնդիրն ուսումնասիրող ակադեմիական շրջանակների, պետական կառավարման

մարմինների արտաքին տնտեսական հարաբերությունների գծով պատասխանատուների, մասնավոր կառույցների և շահագրգիռ այլ անձանց համար:

Միևնույն ժամանակ, ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրություններն ու վերլուծությունները զերծ չեն թերություններից, այդ առնչությամբ կատարված դիտողությունները պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը՝ քննարկվող թեմայով հետագա ուսումնասիրությունները շարունակելու դեպքում: Դրանք են՝

1. Ատենախոսության 1.1 բաժնում կատարված վերլուծության արդյունքում հեղիակը եզրակացնում է, որ «Միջազգային միգրացիոն հոսքերում վերջին տարիներին տեղի են ունեցել որակական փոփոխություններ, մասնավորապես, որպես աշխատուժի ձգողության կենտրոններ գրավիչ են դարձել զարգացող երկրները՝ հատկապես բարձր որակավորում ունեցող աշխատողների համար» (էջ 44): Եզրակացությունն օբյեկտիվ է, սակայն քննարկումից դուրս է մնացել միգրացիայի այն նոր միտումը, ըստ որի ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում, որի շնորհիվ գիտելիքներն ու ինտելեկտուալ տեխնոլոգիաները վերածվել են հանգուցային արտադրության գործոնի, մարդկային կապիտալում ներդրումները համարվում են ավելի կարևոր, քան հիմնական կապիտալում կատարվածները, երկրներն ավելի հակված են տնտեսական աճը խթանելու կրթական համակարգի ինտենսիվ զարգացման շնորհիվ, որն էլ շատ երկրներում խթանում է դեպի զարացած երկրներ կրթական միգրացիան: Միգրացիայի այդ տիպը երկրների միջև մշակութային խորը տարբերակումն է, ինչը տեղ է գտնում նաև մեզանում:
2. Կարծում ենք աշխատուժի միջազգային միգրացիայի միջազգային, տարածաշրջանային և լոկալ կարգավորման քաղաքականությունների քննարկումն այն ձևաչափով, ինչպես ներկայացվել է ատենախոսությունում, գիտական առումով նպատակահարմար չէ, դրանք հայտնի «բանաձևեր» են և բավականաչափ ուսումնասիրված: Նախընտրելի կլիներ աշխատուժի միգրացիայի տարբեր մակարդակների համեմատական վերլուծությունը և դրանց ընդհանրությունների և հակասությունների վերհանումը՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի տեսանկյունից:

3. Ատենախոսության 2.1.2 բաժնում (էջ 88-97) հեղինակը դաշտային հետազոտություն է իրականացրել (հարցաթերթի հիման վրա) և բացահայտել դեպի ԵԱՏՄ երկրներ միգրացիան պայմանավորող հիմնական գործոններն ու խնդիրները ՀՀ-ում: Հարցումները կատարվել են 2017 թ.-ին, որին հաջորդած տարիներին երկրում տեղի են ունեցել էական սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադարձություններ և ենթադրելի է, որ միգրացիայի դրդապատճառների և միգրացիոն հոսքերի աշխարհագրական ուղղությունները շրջանակներում ևս փոփոխություններ եղել են:
4. Ատենախոսության 2.3 բաժնում միգրացիոն գործընթացների համատեքստում ԵԱՏՄ երկրների տնտեսությունների համեմատական վերլուծության արդյունքում հեղինակի այն եզրակացությունը, որ «ԵԱՏՄ-ն ինտեգրացիոն գործընթացների խորացման և նոր հնարավորությունների ընձեռնման հարթակ է, որը կբերի անդամ պետությունների տնտեսական նե-րուժի իրացմանն ու միջազգային մրցունակության բարձրացմանը (էջ 122)» բավականին վիճելի է՝ հաշվի առնելով ռուս-ուկրաինական շարունակվող պատերազմի պայմաններում համաշխարհային հանրության կողմից ԵԱՏՄ առաջատար պետության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների սոցիալ-տնտեսական ահռելի բացասական հետևանքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները, գիտական վերլուծության առումով դրանք կարելի է դիտարկել որպես ոչ էական, սակայն ընդունելի՝ հեղինակի կողմից հետագա գիտական ուսումնասիրությունները շարունակելու առումով:

Տաթևիկ Գրիգորի Վարդանյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտական և գործնական կարևոր նշանակություն, ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում ակնհայտ դրսևորվում է հեղինակի ինքնուրույն և տրամաբանական կուռ հետևողականությամբ հետազոտություն կատարելու ունակությունը: Ատենախոսությունը վկայում է հեղինակի մասնագիտական և վերլուծական բարձր մակարդակի, արժեքավոր վերլուծություն կատարելու հմտությունների մասին:

Կատարված գնահատականները, մշակված մոտեցումները, առաջարկությունները հետապնդում են ինչպես ԵԱՏՄ համագործակցության երկրների շրջանակներում

աշխատուժի միգրացիայի առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ գործնական քայլերը ակտիվացնելուն, այնպես էլ դրանց արդյունավետությունը բարձրացնելուն:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի 12 գիտական հոդվածներում, իսկ արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնում և մի շարք գիտաժողովներում:

Տաթևիկ Գրիգորի Վարդանյանի «Աշխատուժի միգրացիայի կարգավորման հիմնախնդիրները Եվրասիական տնտեսական միությունում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող այլ պահանջներին, ուստի հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Զ. Ա. Թադևոսյան

Զ. Ա. Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար Ն. Հ. Դարբինյան

06.09.2022 թ.